ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

29.08.2019թ.

Արձանագրություն թիվ 1

1. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում 2019 թ. հուլիսի 25-ին հայտարարված մրցույթի վերաբերյալ.

1.1. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով Կարեն Մինսայանն ընտրված է Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

1.2. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով Արամայիս Եսոյանն ընտրված է Ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ամբիոնի վարիչի պաշտոնում:

1.3. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով Դավիթ Սողոմոնյանն ընտրված է Հողաշինարարության և հողային կադաստրի ամբիոնի վարիչի պաշտոնում:

1.4. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով Ռուզաննա Փիլոսյանն ընտրված է Հայոց և օտար լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնում:

1.5. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով Արթուր Գրիգորյանն ընտրված է Ագրոբիզնեսի դեպարտամենտի պետի պաշտոնում:

1.6. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով Հարություն Հարությունյանն ընտրված է Հեռակա ուսուցման դեպարտամենտի պետի պաշտոնում:

1.7. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով Արմեն Աղասարյանն ընտրված է Ա. Քոչինյանի անվ. գյուղատնտեսական քոլեջի տնօրենի պաշտոնում:

2. Համալսարանի որոշ ամբիոնների միավորման հարցի վերաբերյալ.

Հաստատել ՀԱԱՀ որոշ ամբիոնների միավորումից ձևավորվող նոր ամբիոնների ցանկը և երաշխավորել հոգաբարձուների խորհրդի հաստատմանը՝

- Բարձրագույն մաթեմատիկայի և ֆիզիկայի և ջերմատեխնիկայի ամբիոնների միավորումից ձևավորվել բարձրագույն մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոն՝ ագրարային ճարտարագիտություն ֆակուլտետի կազմում:
- Ընդհանուր կենսաբանության և կենսաքիմիայի, մանրէակենսաբանության և վիրուսաբանության ամբիոնների միավորումից ձևավորվել կենսաբանության և կենսատեխնոլոգիաների ամբիոն՝ ագրոնոմիական ֆակուլտետի կազմում:
- Բուսաբուծության և բանջարաբուծության, ընդհանուր երկրագործության ամբիոնների միավորումից ձևավորվել բուսաբուծության և հողագիտության ամբիոն՝ ագրոնոմիական ֆակուլտետի կազմում:
- Ագրոբիզնեսի կառավարման, ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնների միավորումից ձևավորվել ագրոբիզնեսի

կառավարման և քաղաքականության ամբիոն՝ ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի կազմում:

- Սննդի արդյունաբերության սարքավորումների ամբիոնը միավորել բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների, անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների, կիրառական մեխանիկայի և գրաֆիկայի ամբիոնների հետ:

3. ՀԱՊՀ ուսանողական խորհրդի կողմից կազմակերպած «Միասնության ուժը» խորագրով ուսանողական-երիտասարդական հավաքին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մասնակցության վերաբերյալ.

Լավագույն արդյունքների, ձեռքբերումների և հաջողությունների համար համալսարանի նորքոհիշյալ ուսանողները պարգևատրվեցին պատվոգրերով.

- Թոռնիկ Ալիյան (պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ):
- Վարդան Դեմիրճյան (ագրարային ճարտարագիտության ֆակուլտետ):
- Նարեկ Կիրակոսյան (անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ):
- Մարինա Վարդանյան (անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ):
- Եվա Հարությունյան (ագրոնոմիական ֆակուլտետ):
- Մարիամ Մագթաղյան (ագրոնոմիական ֆակուլտետ):

4. ՀԱԱՀ ուսումնական պլանների հաստատման վերաբերյալ.

Հաստատել ՀԱԱՀ ուսումնական նոր պլանները: Բակալավրիատի ցերեկային ուսուցման համակարգում ուսուցումը կազմակերպել 4 տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 4 տարի 8 ամիս ժամկետով:

5. Ագրարային ոլորտի որոշ ուղղություններով (մեղվաբուծություն, ագրոկենսատեխնոլոգիաներ, անասնաբուծություն և ջերմատնային տնտեսություն) ՀԱԱՀ-ում ասպիրանտական տեղեր հատկացնելու վերաբերյալ.

Հանձնարարել գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Ծպնեցյանին և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ. Մակարյանին քննարկել հարցը և կայացնել համապատասխան որոշում:

6. ՀԱԱՀ գիտական խորհրդի 2019-2020 թթ. ուսումնական տարվա աշխատանքային պլանի վերաբերյալ.

Հաստատել ՀԱԱՀ գիտական խորհրդի 2019-2020 թթ. ուսումնական տարվա աշխատանքային պլանը:

7. ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի 2019-2020 թթ. ուսումնական տարվա ծանրաբեռնվածության հաստատման վերաբերյալ.

Հաստատել ՀԱԱՀ գիտական խորհրդի նիստում ներկայացված պրոֆեսորադասախոսական անձնակազմի 2019-2020 թթ. ուսումնական տարվա ծանրաբեռնվածությունը:

8. Դեկանների տեղակալների նշանակման կարգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ.

Հանձնարարել իրավախորհրդատու Ն. Եղիազարյանին սեղմ ժամկետներում ֆակուլտետի կանոնակարգում կատարել դեկանի տեղակալի նշանակման կարգի փոփոխություններ:

9. Համալսարանում դասավանդողների մասնագիտական որակի և աշխատանքի գնահատման ընթացակարգում փոփոխություն կատարելու վերաբերյալ.

Հանձնարարել իրավախորհրդատու Ն. Եղիազարյանին սեղմ ժամկետներում համապատասխան փոփոխություններ կատարել դասավանդողների մասնագիտական որակի և աշխատանքի գնահատման ընթացակարգում:

10. Գիտության կոմիտեի կողմից պայմանագրային թեմատիկ ֆինանսավորմամբ ՀԱԱՀ-ում իրականացվող գիտահետազոտական ծրագրերի հաշվետվությունների հաստատման վերաբերյալ.

10.1. Հաստատել «Գազաբալոնային ավտոմոբիլներից ածխածնի երկօքսիդի արտանետումների նվազեցման ուղիները ՀՀ շահագործման պայմաններում» թեմայով ծրագրի ամփոփ հաշվետվությունը և երաշխավորել գիտության կոմիտե ներկայացնելու համար:

10.2. Երաշխավորել գիտահետազոտական ծրագրերի տարեկան հաշվետվությունները ներկայացնել գիտության կոմիտե.

- Հացաբույսերի (գարի, հաճար, ցորեն, աշորա) նոր սորտանմուշների դիմացկունության գնահատումը աբիոտիկ գործոնների նկատմամբ կլիմայի փոփոխության պայմաններում:
- Հայկական խաղողի հին սորտերի հայտնաբերումը և հետազոտումը որպես հումք բարձրակարգ գինիների արտադրության համար:
- Մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի տեխնոլոգիական գործընթացների մեքենայացման արդյունավետության և էկոլոգիական անվտանգության բարձրացման հիմնախնդիրները:
- Հայկական գինու մեջ հակաօքսիդանտների պարունակության համեմատական վերլուծություն:
- Խաղողի ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրություն կենսատեխնոլոգիական մեթոդների կիրառմամբ:

11. Հարություն Սարգսի Հարությունյանին թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու թույլտվության վերաբերյալ.

Թույլատրել տնտեսագիտական գիտությունների թեկնածու Հարություն Սարգսի Հարությունյանին ղեկավարել թեկնածուական ատենախոսություններ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ

ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ